ռակից շրջանների տեղանունների բառարան»[1]: Եւ ահա, առանց յատուկ փաստարկելու կամ որեւէ վերապահութեան՝ Ղարազիադինի այդ վարկածը կրկնւում է այնպիսի լուրջ աշխատանքներում, ինչպէս Հայկ Յակոբեանի 2003 թ. ծաւալուն յօդուածն է[2] եւ Արմէն Այվազեանի 2016 թ. ռուսերէն հիմնահիմնարար մենագրութիւնը[3]:

Իրականում Աւարայրի դաշտի ճիշտ տեղորոշմանն ամենից մօտ է եղել պատմական աշխարհագրութեան հմուտ գիտակ ակադ. Ս. Երեմեանը, ով ճակատամարտի վայր էր նշում Ս. Թադէի վանքից հարաւ ընկած Զալդրանի սարահարթը, որով հոսում է Զանգեմար – Մակու-չայ կոչուող (հին, խորհրդային եւ «Գուգլի» քարտէզներում) Տղմուտ գետի գլխաւոր օժանդակը: Նախ՝ հէնց սրա ձորահովիտն էին արեւմուտքից ու հարաւից շրջապատում այն լեռները, որոնք հին քարտէզներում (ռուսական 5-, 10-վերստանոց եւն) կոչուած են «Շաւարշ», «Շաւարէշ», «Շիւարէշ», իսկ այդ անուան կապը Արտազ գաւառի **Շաւարշան** քաղաքի (եւ գաւառամասի)[4] հետ հետ ակնյայտ է: Բացի այդ, հէնց նշուած օժանդակի ափերով էր անցնում Ատրպատականն ու Մեծ Հայքի հարաւ-արեւելքը (Հեր գաւառը) Կոգովիտ գաւառով անցնող Արտաշատ – Տիգրանակերտ «Արքայական ճանապար-

---

նում» (հտ. 1, 1974, 607), որոնք արտատպուած են նաեւ «Հայկական համառօտ հանրագիտարանում» (հտ. 1, 1990, 304-305):

[1] Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 1986, 359:

[2] Հակոբյան 2003, 40-67:

[3] Айвазян 2016 (516 с. + илл.).

[4] Շաւարշան – Արտազ գաւառի մասին տե՛ս նախ՝ Պատմահօր մօտ (Խորենացի ցի 1913, գլ. Բ.ծբ, 182). «Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա *[իմա՛* Ալանաց ներգաղթեալներին*]* ի հարաւոյ յարեւելից կուսէ Մասեաց, որ կոչէր **Շաւարշական գաւառ**, ի վերայ պահելով զբնիկ անունն **Արտազ**. քանզի եւ աշխարհն, ուստի գերեցանն՝ Արտազ *[var.* Արտոզ, Արդոզ*]* կոչի մինչեւ ցայսաւր ժամանակի» (այստեղ եւ ստորեւ բոլոր ընդգծումները մերն են): ԺԳ դարում Վարդան Արեւելցին իր «Աշխարհացոյց»-ում գրում էր. «Արտազ գաւառն Մակու է, ուր կայ Սուրբ առաքեալն Թադէոս» (Վարդան վարդապետ 1960, 16, 32): Ըստ այսմ, ակադ. Լեւոն Խաչիկեանի խօսքերով՝ Արտազը «հնում կոչուել է Շաւարշաւան գաւառ, իսկ միջնադարում Մակու կամ Առաքելոց երկիր» (Խաչիկեան 1999, 43): Հ. Ղ. Ալիշանի կարծիքով՝ գաւառը Շաւարշան է կոչուել «գուցէ անուամբ Հայկազն պայազատաց մէկուն, որ կոչուէր Շաւարշ» (Ալիշան 1901, 62): Այդ անունը պահպանել է նաեւ Մամիկոնեան նահատակին նուիրուած «Իմ Հայրենեաց հոգի Վարդան» ազգային երգը («Որ Հայրենեաց շողայ արեւ / **Շաւարշանայ դաշտին** վերեւ...»): Ողջ երկրամասի մանրամասն նկարագրութիւնը տե՛ս Տէմիրճեան 1974; Հախնազարյան 2012, 9-26: